ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՐՈՅԻՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻՆ

Ձեզ ենք դիմում 1989 թ. հուլիսի 11-ին հատուկ շրջանի պարետ, փոխգնդապետ Մուսատովի և ԼՂԻՄ ՆԳՎ պետ Թումանյանցի այն հայտարարության կապակցությամբ, ըստ որի ներքին զորքերի 19 զինծառայողներ Ստեփանակերտ-Շուշի ճանապարհահատվածում կարգուկանոն մտցնելիս ու կուտակները մարելիս մարմնական վնասվածքներ են ստացել: Հիմք ընդունելով այդ ինֆորմացիան, ՏԱՍՍ-ը հաղորդել է, որ այդ զինծառայողները վիրավորվել են պայթուցիկ նյութերից, քարերից, փայտերից և այլն:

Մենք մայր ենք և գիտենք, թե ինչ է նշանակում զինվոր որդի ունենալ: Ուստի չէինք կարող անտարբեր մնալ այդ փաստի հանդեպ: Դրա համար էլ որոշեցինք այցելել վիրավոր զինվորներին, օգնել՝ ինչով կարող ենք: Այդ նպատակով եղանք մարզկենտրոնի բոլոր բուժհիմնարկներում, բայց ոչ մի վիրավոր զինվոր չգտնելով ստիպված դիմեցինք հատուկ շրջանի պարետին: Նա հայտնեց, որ վիրավորներ չկան և բոլոր զինվորներն էլ, ինչպես ասում են, ողջ-առողջ են:

Այսքանից ելնելով մենք դիմում ենք ձեզ և պահանջում օբյեկտիվ գնահատական տալ այդ պրովոկացիոն հաղորդումներին, դատապարտել մեղավորներին և հերքում պահանջել:

Մի խումբ մայրեր

16 ստորագրություն



Լուս. Էդ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Արցախցի...